ՀՏԴ 82.09(479.243) *Գրականություն*

Սոկրատ ԽԱՆՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ

ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՌՈԲԵՐՏ ԵՍԱՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

Սույն հոդվածում վերլուծվում ու գնահատվում են տաղանդավոր բանաստեղծ Ռոբերտ Եսայանի այն ստեղծագործությունները, որոնցում պատկերված է Արցախյան շարժումը՝ սկսած 1988 թվականից մինչև մեր օրերը: Ընդգծվում է այն ճշմարտությունը, որ արդարացի պատերազմի գեղարվեստական պատկերը ռեալիստորեն կարող է ստեղծել առաջին հերթին ազատամարտիկ-բանաստեղծը: Նման պոետներից է Ռ. Եսայանը, որ Արցախյան պատերազմին մասնակցել է որպես հրետանավոր: Նշվում է, որ Ռոբերտի ժողովածուների լեյտմոտիվը հայրենասիրությունն է: Նա եկել է համոզիչ եզրակացության, ըստ որի նենգ հարևանի՝ ազերի թուրքի հետ պետք է խոսել միայն ու միայն զենքի ուժով: Դրա լավագույն վկայությունը 2016-ի Ապրիլյան Քառօրյա պատերազմն է, որտեղ մեր երիտասարդ զինվորները իրենց կյանքի գնով պաշտպանեցին մեր երկրի սահմանները: Պատահական չէ, որ Ռ.Եսայանն իր նոր ժողովածուն անվանել է <<Խաչ և սուր>>: Հոդվածի մեծ մասը նվիրված է այդ գրքի արժևորմանը:

Բանալի բառեր. *Արցախյան շարժում, պոեզիա Ռոբերտ Եսայան, ազատություն, անկախություն, խաչ, սուր, հաղթանակ, պաշտպանական բանակ, հայրենապատում, պոեզիայի փիլիսոփայություն*

С. А. Ханян

АРЦАХСКОЕ ДВИЖЕНИЕ В ПОЭЗИИ Р. ЕСАЯНА

В данной статье анализируются и оцениваются те произведения талантливого поэта Роберта Есаяна, в которых отражается Арцахское движение, начиная с 1988 г. по настоящее время. Подтверждается истинность мысли , что художественный образ войны реалистически может создать в первую очередь поэт-борец за свободу . Одним из таких поэтов является Роберт Есаян, который участвовал в Арцахской войне как артиллерист . Подчеркивается, что лейтмотивом в сборниках Р. Есаяна является патриотизм. Поэт пришел к убедительному выводу, что с коварным соседом-азеритюрком надо говорить только и только языком оружия. Лучшим свидетельством этой истины является Апрельская четырехдневная война в 2016 году , когда наши молодые солдаты ценой своей жизни защищали границы нашей Родины. Не случайно, что Р. Есаян свою новую книгу назвал <<Крест и меч>>. Значительная часть статьи посвящена оценки сборника.

Ключевые слова*: Арцахское движение , поэзия, Роберт Есаян, свобода , независимость, крест, меч, победа, оборонительная армия Арцаха, стихи о родине, философия поэзии.*

S.A. Khanyan

ARTSAKH MOVEMENT IN YESAYAN'S POETRY

This article analyzes and evaluates those works of the talented poet Robert Yesayan in which the Artsakh movement is reflected, starting from 1988 to the present days. The truth of the thought is confirmed, that the artistic image of war can be created realistically first of all -by fighter for freedom. One of these poets is Robert Yesayan, who participated in the Artsakh war as an artilleryman. It is emphasized that patriotism is the leitmotif in the collections of R. Yesayan. The poet came to the convincing conclusion that with the insidious neighbor-Azeriturk it is necessary to speak only and only with the language of arms. The best evidence of this truth is the April Four-Day War in 2016, when our young soldiers defended the borders of our Motherland at the cost of their lives..Not by chance that R. Yesayan called his new book "The Cross and the Sword". A considerable part of the article is devoted to the evaluation of the collection.

***Key words**: Artsakh movement, poetry, Robert Yesayan, freedom, independence, cross, sword, victory, Arkhakh defensive army, poems about the homeland, poetry philosophy.*

Տարիներ առաջ «Հայրենիքի ճակատագիրը հայ պոեզիայում» իմ ուսումնասիրության մեջ Ռոբերտ Եսայանի ստեղծագործության մասին գրել եմ. «Ռ. Եսայանի հայրենասիրական երգերը ոգեկոչելու ուժ ունեն, որովհետև դրանք հնչում են որպես գոյության նոր դասեր, զինվորագրվելու ազդակներ… Հայացքն ուղղելով Տիրոջը, Ռ. Եսայանը բացում է մշուշոտ վարագույրը, համարձակ մեջտեղ բերում ընդվզումից հառնող իր հենակետերը: Նրա հենակետերն ակունքվում են հողից, ազգային ճակատագրից, հավատից»[1]:

Դիտարկումը ճիշտ էր ու բնութագրական: Վկայությունը նրա ժողովածուներն են՝ մեկը մյուսից հասուն, բարձրարվեստ, պոեզիայի փիլիսոփայության եսայանական դրսևորումներով: Եվ նշեմ գոհունակությամբ, որ գրախոսել եմ նրա բոլոր ժողովածուները՝ արդյունքում հրատարակել «Ռոբերտ Եսայանի պոեզիան՝ աշխատությունը՝ կրկին բարձրաձայնելով. «Տառապանքից են ծնված Ռ. Եսայանի երգերը: Նա իր նախորդներից փոխ է առել արյան հյուլեն, որն իր մեջ գենից բացի, ներառում է բազմադարյան հիշողությունը, բոլոր կշիռները լուծում արցունքի մեջ, արևով ցրում վիշտը և հասունանում արագ: Նա խոսում է իր իմաստուն ժողովրդի անունից՝ գիտակցելով, որ մեր ցավը շատ կողմերով կապված է չմաքրված աշխարհի հետ: Բանաստեղծը ժողովրդի լուսեղեն գալիքը տեսնում է մաքրված աշխարհի մեջ՝ բացականչելով. «Աշխարհը թող մաքրի իրեն, զուլալվի տառապած աչքի պես» [2]:

Աշխարհի վերաբերյալ այս տեղին ու ճշմարիտ կարծիքը Ռ. Եսայանի կենսահայեցողության արտահայտություն է: Նա ընդգծված ռեալիստ բանաստեղծ է՝ ռոմանտիկական երանգներով և չի կարող կեղծել իրեն, որովհետև երկրագնդում տեղի ունեցող տագնապալից իրադարձությունների հողմապտույտներից տուժում է նաև ծանր ցեղասպանության ենթարկված իր մայր ժողովուրդը: Նա ցավով է խոսում Սումգայիթում, Բաքվում, Գանձակում հայ ազգաբնակչության հանդեպ կատարված վայրագությունների մասին, բանաստեղծորեն պատկերում Սիրիայում տեղի ունեցող այն վայրագությունները, որոնցից մեծապես տուժում է նաև Սիրիայի դարավոր մեսրոպաշունչ գաղութը: Նրա սրտի միջով է անցնում այն գնդակը, որից 2016-ի ապրիլյան քառօրյա պատերազմում մարտիրոսվեցին մեր դյուցազուն պատանիները՝ պաշտպանելով մեր սահմաններն ու մեր ժողովրդի ազգային արժանապատվությունը:

Ահա այստեղ է, որ պիտի ընդգծվի Ռ. Եսայան ազատամարտիկ-բանաստեղծի անցած բեղուն ճանապարհն ու ինքնատիպ պոետական տաղանդը: Պետք է ընդգծվի, որ հրաշքներ կարող է գործել գեղարվեստական այն հայրենապատումը, որն ստեղծում է զինվոր բանաստեղծը: Այստեղ է, որ հայրենիքի հանդեպ արտաբերված յուրաքանչյուր բառ համեմվում է որդիական սիրով՝ անկեղծության ու զգոնության կոչող տագնապի երանգներով: Ու պատահական չպետք է համարել ստեղծագործական այն գործընթացը, որ ծիածանված է Ռոբերտի շարունակվող կենսամատյանում, որտեղ ընդգծվում է այն վեհ ճշմարտությունը, որ անհատի համար ժողովրդից դուրս չի կարող լինել կյանք ու երջանկություն: Այստեղից էլ՝ այն արարող խռովքը, որ կոնկրետ առնչված է հայրենիքի հետ: Տեղն է կրկին ու կրկին բարձրաձայնել այն համոզմունքը, որ հայ պոեզիայում հայրենիք և ժողովուրդ հասկացությունները նույն իմաստն ունեն, որովհետև միայն մենք՝ հայերս, ունենք կորուսյալ հայրենիք, աշխարհասփյուռ ժողովուրդ ու վերածնված փոքրիկ մի Հայաստան և փրկված-սրտաչափ մի Արցախ:

Այս դեպքում ևս անվտանգ չեն մեր աչքի լույս ու սրտի հույս ո՛չ Հայաստանը, ո՛չ էլ գերությունից ազատագրված նրա որդին՝ Արցախ անունով: Այս անքուն գիտակցությունն է հենց հրամայել Ռ. Եսայանին՝ 2017-ին հրատարակած Երկերի 8-րդ հատորի առաջին գիրքը անվանել ‘Խաչ և սուր», որտեղ զետեղված է բանաստեղծությունների, հոդվածների, ակնարկների, հարցազրույցների և նամակների բազմերանգ ու բազմաբնույթ մի փունջ:

[1] Ս. Խանյան, Հայրենիքի ճակատագիրը հայ պոեզիայում, 1950-90-ական թվականներ, ԱրՊՀ հրատ., 2003, էջ 226

[2] Ս Խանյան, Ռոբերտ Եսայանի պոեզիան, «Դիզակ պլյուս» հրատ., 2008, էջ 7

Հրատարակվում են գրքեր, որոնք արվեստի նմուշ լինելուց բացի, լայն գործոններ են ընդգրկում՝ առնչված ժողովրդի ճակատագրին: Ռոբերտի սույն ժողովածուն նման երևույթներից է: Դա նախ հոգևոր մի նոր տարածություն է բանաստեղծի ստեղծագործական որոնումների դաշտում, ապա՝ ազատամարտիկ-բանաստեղծի կենսափիլիսոփայության ծիածան, որի երանգները կամարվում են հայակուռ խաչի ու սասնակոփ սրի շափաղումներից, կոնկրետ՝ խաչը որպես սրբազնագույն հավատի պատկեր, սուրը՝ որպես ազգափրկիչ ուժ, որոնք միասին պիտի փայլատակեն հայ ժողովրդի ձեռքում՝ բոլոր պահերին: Դա մոլորված ու խարդախված աշխարհում մեր ազգային ճակատագրի հրամայականն է:

Ռ. Եսայանի ամբողջ ստեղծագործության առանցքում այս դասն է ընդգծված: Դեռևս 1993թ., երբ Արցախ աշխարհը պատերազմական արնաներկ դաշտ էր, ուր բռունցքվել էին հայոց դյուցազունները՝ հանուն ազգային արժանապատվության վերածնության: Հենց այդ ժամանակ էր, երբ Ռոբերտը բանաստեղծական ջրդեղված տողերի մեջ ծածանեց հայ մարտիկի գիտակցված խիզախումի երդումը.

Հո՛ղ իմ հայրենի, քո աստղի համար
Իմ արյան միա՛կ երկինքն եմ քամել,
Բախտս քո բախտի խաչին եմ գամել,
Որ քո երա¯զը… հավերժ հուրհրա»… [1]

Ըստ էության, գրողի և ստեղծագործության գաղափարահուզական ամբողջ գոբելենը հյուսվում է նրա աշխարհընկալման ու համոզմունքների հենվածքով: Այդտեղ է, որ ասեղնագործվում է նաև գրողի գեղագիտական իդեալը:

Արցախյան պատերազմի թեժ օրերին կայացած մի երկխոսության ժամանակ, որը կազմակերպել էր բանաստեղծ-լրագրող Հ. Ալեքսանյանը բանաստեղծ-զինվոր Ռ. Եսայանի հետ, խորապես բացահայտվել է բանաստեղծ-ժողովուրդ փոխհարաբերության հիմնախնդրի նշանակությունը, առանձնապես պատերազմի առաջին գծում գտնվող բանաստեղծի համոզմունքն այդ կապակցությամբ: Ռոբերտը գրում է, որ պատերազմում զենք վերցրած յուրաքանչյուր ոք իր մեջ պետք է ունենա Տիրոջ զգացողությունը և շշնջա. «Ես տերն եմ այն հողի, որի վրայով քայլում եմ, որն ինձ սնում է, և իմ գոյությունը նրան պաշտպանելու մեջ է: Պահը ճակատագրական է: Մեր ընթացքին հետևում են ոչ միայն մեր նախնիները, այլև ապագա սերունդը[2]»:

Երկխոսության ընթացքի մեջ լրիվ բացահայտվում է Ռ. Եսայանի բանաստեղծական հավատամքը: Ամեն մի հայ պետք է ապրի հայրենի երկրի ազատության երազանքով, որը միանշանակ ու միագիծ ընթացք չէ: «Եթե ազգային երազանքն ունի իր քաղցրությունը,- գրում է Ռոբերտը,- ունի և իր դառնությունը: Երկուսն էլ մերն են: Մեր արյան մեջ ենք կրում»[3]:

Ահա այս համոզմունքի բանաստեղծական պատկերն է, որով համեմվում է Ռ. Եսայանի հայրենապատումը՝ գրական տարբեր ժանրերով:

Գրական տարբեր տեսակների բուրավետ մի փունջ է Ռ. Եսայանի «Խաչ և սուր» ընտրանին: Այն բացվում է ԼՂՀ Գերագույն խորհրդի առաջին նախագահ Արթուր Մկրտչյանի հիշատակին նվիրված ձոնով: Ազգային երազանքի քաղցրության ու դառնության խոսուն և համոզիչ մի հյուսվածք է ամբողջ ձոնը, որն ավարտվում է հետևյալ քառատողով.

Քո ցավից հիմա բխում է երազ,
Ելքդ դառնում է հույսերի երա¯մ:
Խղճի դարպաս էր վերքդ հերոսի,
Թեկուզ և ծանր էր Խաչը Հիսուսի:[4]

Արցախյան ազգափրկիչ պատերազմի նշանակության թարմ պատկեր է Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանին նվիրված ձոնը՝«Արցախ» վերնագրով: Այն երկրի անցյալին, ներկային և ապագա ճախրանքին նվիրած շոշափելի պատկեր է: Ըստ բանաստեղծի՝ Արցախը «Տրոյական մի ձի» է, որը «Ծառս ելավ ու կործանեց ներսից ամեն մի շղթա», Հայկյան ոգով վերաձևեց բերդ ու ավան ու դարձրեց բռունցք ու ական: Եվ վստահելին այն է, որ Արցախը շարունակում է՝ ընթացքն իր հաղթական…՝ որպես հզոր մի տերություն».

[1] Ռ. Եսայան, Խաչ և սուր, Ստեփ., «Վաչագան Բարեպաշտ » հրատ., 2017, էջ 1
[2] Նույն տեղում, էջ 5
[3] Նույն տեղում, էջ 7
[4] Նույն տեղում, էջ 10

Արծիվ, որի թևերին կա՛ Մասիսի ձյուն,
Կա՛ Անիի կարոտ, Սասնա հանդգնություն…
Հայաստանի շո՛ւնչն է բաբախում կրծքի տակ,
Եվ գլխին կրում է Տիգրան Մեծի սուրբ թագ:

Երախտապարտ սերնդի անունից է գրված Սպարապետ Վազգեն Սարգսյանին ընծայած բանաստեղծությունը, որտեղ ընդգծվում է այն գաղափարը, որ Վ. Սարգսյանի վառած աստղերը «ոգու հաց են», կամքը՝ ուղի:

Բանաստեղծն ընդհանրացնում է.

Սպարապետ… կամքդ ուղի է դառնում,
հայացքդ՝ ոգու սրբագործություն,
քո մարտիկներն են ելքերից հառնում
և գնում դեպի սխրագործություն: [1]

Բանաստեղծության մոտ Ռ. Եսայանը զետեղել է նաև գեղարվեստական ակնարկ՝ «Հայոց սպարապետը» խորագրով: Այն գրված է Մեծն սպարապետ, Արցախի և Հայաստանի հերոս Վազգեն Սարգսյանի ծննդյան 58-րդ տարեդարձի առիթով, և ընդգծվում է այն միտքը, որ նրա պատգամներն իրականացվում են մեր անկախ պետականության ամրապնդման և բանակի հզորացման գործընթացում: Որպես արդիական հնչողություն ու նշանակություն ունեցող խորհուրդ՝ Ռոբերտը բերում է Սպարապետի իմաստուն խոսքը. «Ղարաբաղի հարցի կարգավորումը պիտի իրականացնի ողջ հայ ժողովուրդը Հայաստանում, Ղարաբաղում, Սփյուռքում: Բայց առաջին հերթին պետք է հաշվի առնել Ղարաբաղի ժողովրդի կարծիքը, որովհետև նա իր կյանքի, իր զավակների արյան գնով կարողացավ այս պատերազմում հիմնական դերակատարը լինել: Ինքը նվաճեց իր հողի վրա անկախ ապրելու իրավունքը, և ողջ հայ ժողովուրդը պարտավոր է պաշտպանել այն[2]:

Արցախի հերոս Արկադի Տեր-Թադևոսյանին նվիրած բանաստեղծությունը վերնագրված է «Խաչ և սուր»: Երկու մասից բաղկացած այս ստեղծագործությունը Ռ. Եսայանի հայրենասիրական ընդգծված փիլիսոփայությունն է, Արցախյան պատերազմի տարիներին հայ ժողովրդի զինվորյալ որդիների հրամանատարական տաղանդի գեղարվեստական պատկերը: Բանաստեղծության տողերում խոսում է Արցախը՝ իր հերոսական դարերի հպարտությամբ ու անմիջականությամբ: Երգի մեջ տողերն ասես շողում են մի կողմից հպարտության զգացումով, մյուս կողմից՝ ապագայի հանդեպ ունեցած հավատով: Այստեղ երազանքը «կապույտ աղեղն է լեռան», «հավատն ի վեր ելնում է Սերմի ընդվզումը», «ժայռերի վրա բռնկվում են հույսի կրակները»: Բանաստեղծը լեգենդար հրամանատարի անունից ներկայացնում է պատերազմն իր հաղթական բարձունքներով, մարտիրոսվածների հանդեպ եղած անմարում կարոտի արցունքներով: Ռ. Եսայանը պատերազմի մասնակից բանաստեղծ-մարտիկի անսքող պատկերներով է ներկայացնում ճակատամարտը.

Եվ արյուն է թափվում ու արյան հետ՝ փետուր,
Եվ թռիչքի աճյուն ու ապարանք հողմի, -
Աստվա՜ծ իմ, ոտքիս տակ ճանապարհ չէ, այլ՝ թո՛ւր,
Հորիզոնը՝ վահան, որ նախնի՛ս է թողել՝
Իբրև ժառանգություն: Խավարի մեջ հիմա
Ես իմ քա՛յլն եմ խրում հրե սեպի նման:[3]

Ռ. Եսայանի համար Արցախյան պատերազմն ունի իր վեհ անունը՝ «Ազգային-ազատագրական գոյամարտ»: Արցախ երկրի թշնամին հոլովվում է իր կոնկրետ անվամբ՝ «թուրք», որն իր դարավոր վայրենությունից չի հրաժարվել՝ որպես հայ ժողովրդի երդվյալ թշնամի:

Ռ. Եսայանի հայրենապատումը ժողովրդի ու նրա ավանդական տարածքի փոխհարաբերության փիլիսոփայությունն է.

Տարածքը դեռևս հայրենիք չէ:
Տարածքը հայրենիք է, երբ շուրջդ հնչում է
հայոց արքայական լեզուն,

[1] Նույն տեղում, էջ 12
[2] Նույն տեղում, էջ 18
[3] Նույն տեղում, էջ 17

և ազատագրված հողից հառնում է խաչքարը:[1]

Ռ. Եսայանի պոեզիայի վերաբերյալ իր ելույթներից մեկում բանաստեղծ-գրականագետ Վ. Հակոբյանը գրել է. «Հետաքրքիր երևույթ է Ռոբերտ Եսայանի պոեզիան: Արցախյան համազգային շարժման ու գոյամարտի մասին նրա քերթվածքները կարդալուց հետո գալիս եմ այն մտքին, որ պատերազմական թեմայով գրվող ցանկացած բառ թե ամբողջական երկ պետք է անցած լինի խրամատով, այլապես… պահը միջնորդավորվածություն է ստանում… Նա կոնկրետ ձեռնարկումի ու գործի մարդ է, առաջիններից մեկը, կամավոր զենք է առել ու մեկնել ռազմաճակատ՝ ծոցում «թաքցրած» գրիչն ու ծոցատետրը: Հինավուրց հայկական հողն ազատեց որպես հրետանու զինվոր, իսկ հոգևոր աշխարհում «տարածքներ գրավեց» իր բանաստեղծությամբ»…[2] :

Այս բնութագրական խոսքից հետո կարելի է ավելացնել այն ճշմարիտ համոզմունքը, որ արցախյան գոյամարտի բանաստեղծական վավերագրության ընթացքի մեջ Ռ. Եսայանն է հրետանու նշանառու զինվորը: Թերթում ես նրա մի քանի տասնյակ ժողովածուները, վերընթերցում կրկին ու կրկին ու դարձյալ համոզվում, որ արցախյան հայրենափրկիչ գոյամարտի պոեզիայի ծանր հրետանին ազատամարտիկ-բանաստեղծ Ռ. Եսայանն է, որովհետև նա ևս կարող է 5-րդ դարի պատմիչ, Վարդան Մամիկոնյանի գաղափարակից-զինվորյալ Մեծն Եղիշեի նման հաստատել. «Ո՛չ կարծիքներով եմ վեր թռել և ո՛չ էլ լուրերից արթնացել, այլ ես ինքս անձամբ նույն տեղում պատահեցի ու տեսա»[3]:

Ռ. Եսայանը որպես մասնակից-զինվորյալ Հայոց արցախյան գոյամարտի, ինչ տեսել է՝ այն մասին է գրել, ինչ գրել է՝ ջրդեղել է իր նետած արկի հրով և յուրաքանչյուր տող դարձրել խիզախ զինվորին հաղթանակի բարձունքներ տանող հետագիծ:

Տարիներ առաջ, որպես իր հերթական՝ «Ծարված հետքեր» ժողովածուի մուտք, Ռ. Եսայանը զետեղել է «Խռովք» քնարական պոեմը: Մեղադրելով Սիամանթոյի «Արդարություն, թող ես թքնեմ քու ճակատիդ» հայտնի պոետական ցասումը, նա, որպես ժառանգորդը մեծ երգչի, նոր օրերի մեջ փոփոխված ոչինչ չի գտնում: Երեկվա և այսօրվա թշնամիներին լավ է ճանաչում: Ոչինչ չի փոխվել: Ոճրագործ քոչվորների մի հոծ ամբոխ նորից կույր խավարից հանում է ոխը, պղծում ամեն մի սրբություն և ձգտում տերը դառնալ «Այլաքրտինք խոյանքների ու պատմության»:

Ռ. Եսայանը Սիամանթոյի պես ընդվզում է անարդարության դեմ, զինվորագրվում հայ ժողովրդի նոր գոյամարտին՝ դիմելով Արցախ մորը.

Քո լույսը հող է և ունի կշիռ,
Եվ քո անձրևը աստղատարափ է, -
Երկունքիդ լույսից այնպես երակվիր,
Որ քո անցյալն ու գալիքը արբեն:[4]

Ռ. Եսայանը տեսնում ու լսում է նաև այս օրերին ազերի-թուրքերի նորաթուխ սուլթանի՝ Իլհամ Ալիևի հոխորտանքը ոչ միայն Արցախի, այլև Հայաստանի, աշխարհասփյուռ հայության մայրաքաղաք Երևանի, Հայաստանի դարավոր ու պողպատակուռ ողնաշարի՝ Սյունյաց աշխարհի դեմ՝ կոնչալով, թե իբր դրանք ադրբեջանական տարածքներ են ու պիտի վերադարձվեն Ադրբեջանին:

Իր մայր ժողովրդի առյուծասիրտ որդիների պես Ռ. Եսայանը ևս արհամարհանքով լսելով հարևան երկրի խելացնոր ղեկավարի այս զառանցանքը, միաժամանակ հնչեցնում է զգոնության զանգը, հայոց հազարամյակների հաղթարշավի հավատով դիմում Հայաստանին, նրա դարերն անվանում «հայրենահայաց լուսամուտներ», տեսնում, թե ինչպես է «բառերի հոգուց ելնում կարմիր տարերքը երկնի»: Ու որպես հայոց երկրի արցախածին զավակ, ի հեճուկս պարտված ու մտագալար ոսոխի, երդվում.

Չի նստի երբեք կամքիս սալերին երկունքի մոխիր,
Եվ չի պատանա երազի ճամփին մառախուղն ահի, -
Հայկյան նետի պես ճեղքում է հոգիս կեղևը ոխի,
Որ ծաղկի՝ լույսը հավատի շուրթին և շեղբին բահի:[5]

[1] Նույն տեղում, էջ 151
[2] Նույն տեղում, էջ 152
[3] Եղիշե, Վարդանի և հայոց պատերազմի մասին, ԵՊՀ հրատ., Ե., 1989, էջ 31
[4] Ս. Խանյան, Ռոբերտ Եսայանի պոեզիան, Ստեփ., «Դիզակ պլյուս» հրատ., էջ 9-10
[5] «Գրական թերթ», թիվ 1, 2 փետրվարի, 2018, էջ 5

Կարդալով Ռ. Եսայանի հայրենապատումը, չես կարող չբռնկվել այն աստվածային զգացումով, որ կոչվում է սեր առ հայրենին: Նրա քնարական հերոսը չի թևահատվում երբեք, լավատես է, հուսավառ: Նրա հայրենապատումը խոհի ու երազի, թախծի ու ակնկալիքի, ճակատագրի և մաքառման խտացում է, ազգային հող ունի:

Ռ. Եսայանի հայրենասիրական պոեզիան Արցախյան շարժման առաջին օրերից սկսած մինչև մեր օրերը հայոց հին ու նոր ժամանակների դժվարին ու փառավոր ուղի անցած երկրի գեղարվեստական վավերագրություն է: Հայ ժողովրդի կամքի ուժն ու վճռականությունն ազգային-ազատագրական պատերազմում ներկայացված են թարմ ու դիպուկ արտահայտչամիջոցներով: Փոխաբերությունների ինքնատիպ տեսակներով բանաստեղծը բնութագրում է պայքարի ելած ժողովրդի ճակատագիրը՝ որպես սխրագործության ոգի, հայոց երազի ցերեկ: Այդ ճանապարհին զինվորական շարքերից բխում է հույսի արևը, և նոր սխրանքի թևեր է ձեռք բերում ինքնության ոգին: Այդ են վկայում 2016-ի ապրիլյան քառօրյա պատերազմի քաջազուն պատանի զինվորներին ու նրանց օգնության հասած կամավոր ազատամարտիկների սխրանքները պատկերող նրա նոր ստեղծագործությունները:

Ընդհանրության մեջ Ռ. Եսայանի հայրենապատումը նոր ու թարմ էջ է հայոց դարավոր ու բարձրարվեստ պոեզիայի գանձարանում: